ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 դեկտեմբերի 2020 թվականի N 35 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությարենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի յոթերորդ մասը, Մեծամոր համայնքի ղեկավարի 2020 թվականի նոյեմբերի 25-ի N 560 գրությունը, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. *Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի 2021 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 369 420, 0 հազ. /երեք հարյուր վաթսունինը միլիոն չորս հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ, ծախսերի գծով՝ 369 420, 0 հազ. /երեք հարյուր վաթսունինը միլիոն չորս հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ:*
2. *Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:*
3. *Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:*
4. *Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:*
5. *Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/ համաձայն հատված 4-ի:*

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:

7. Հատատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

8. Թուլատրել համայնքի ղեկավարին բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանը հաջորդող օրը:

կողմ- 9 դեմ- 0 ձեռնպահ- 0.

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ

ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ

ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ

ՄԱՒԼՅԱՆ ԿՈԼՅԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ

ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ